

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՓԱԹԵԹ

3-րդ դասարան

Մաս 2

A large rounded rectangular box with a black border, containing two horizontal lines for writing answers. The top line is shorter and centered, while the bottom line is longer and extends further towards the left and right sides of the box.

1. Լուծի՛ր խնդիրները:


Ա. Քանի՞ տարբեր տառեր ես օգտագործում ձմռան երեք ամիսների անունները գրելու համար:

Բ. Քանի՞ ընդհանուր տառ ունեն ձմռան երեք ամիսների անունները:

Գ. Քանի՞ անգամ ենք գրում 4 թվանշանը 1-50 թվերը գրելու համար:

Դ. Քանի՞ անգամ ենք գրում 0 թվանշանը 1-100 թվերը գրելու համար:

2. Ո՞ր կտորն է պակասում:



3. Լուծի՛ր խնդիրները: Փորձի՛ր հաշվել էլեկտրոնային հաշվիչի օգնությամբ:

Ա. Վարդուհին պատրաստեց 40 բլիթ: 40 բլիթ պատրաստելու համար օգտագործեց 1 լ կաթ, 1 կգ ալյուր, կես կգ շաքարավազ, 1 թթվասեր, 4 ձու: Ինչքա՞ն գումար ծախսեց Վարդուհին:

Գնացուցակ	
1 ձու	70 դրամ
1 կգ ալյուր	400 դրամ
1 կգ շաքարավազ	400 դրամ
1 թթվասեր	250 դրամ
1 լ կաթ	420 դրամ

Լուծում

Պատ.՝

Բ. Էվան պատրաստեց 30 կտոր պիցցա: 30 կտոր պատրաստելու համար
 օգտագործեց 5 խմոր, կես կգ պանիր, կես կգ հավի միս, 1 կետչուպ, 1 թթվասեր, 5
 ձու: Ինչքա՞ն գումար ծախսեց Էվան:

Գնացուցակ	
1 ձու	50 դրամ
1 խմոր	200 դրամ
1 թթվասեր	280 դրամ
1 կետչուպ	320 դրամ
1 կգ պանիր	4000 դրամ
1 կգ հավի միս	2000 դրամ

Լուծում

Պատ.՝

4. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$45 : 9 + 36 : 9 + 81 : 9 + 18 : 9 + 72 : 9 + 27 : 9 + 9 : 9 + 90 : 9$$

$$42 : 6 + 54 : 6 + 12 : 6 + 36 : 6 + 6 : 6 + 60 : 6 + 48 : 6 + 24 : 6$$

5. Լրացրու աղյուսակը:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Օ	Կ	Յ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
100	200	300	400	500	600	700	800	900
Դ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ	Ք
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

1000	
2458	
5568	
7889	
9958	
ՔՉԿԱ	
ՑՇԻԹ	
ՎՃԽԷ	
ՍՈՀԴ	
ՓՊՁԸ	

ՔԵՉ ՍՈՏ ԱՆՊԱՅՄԱՆ ԿՍՏԱՅՎԻ: ՀԱՄԱՐՁԱԿ ԵՂԻՐ



6. Գրի՛ր նախորդող թիվը:

988

1001

2507

4560

8452

7485

10. 405

12 609

25. 109

35. 112

58. 100

7. Թվերը դասավորի՛ր նվազման և աճման կարգով:

4560, 1452, 7485, 4005, 6090, 7009

8. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Երբ Գուրգենը իր գումարի կեսը տվեց Նարեկին, նրա մոտ մնաց 2000 դրամ:

Որքա՞ն գումար ուներ Գուրգենը:

Լուծում

Պատ.՝

Բ. Դավիթը Անահիտին նվիրեց մի քանի կակաչ, իսկ Արամը՝ 5 նարգիզ: Երբ Անահիտը այդ ծաղիկների կեսը տվեց Աննային, նրա մոտ մնաց 7 ծաղիկ: Դավիթը Անահիտին քանի» կակաչ էր նվիրել:

Լուծում

Պատ.՝

Գ. Երբ Վիլյամը իր կոնֆետների կեսը հյուրասիրեց ընկերներին, իր մոտ մնաց 10 կոնֆետ: Քանի՞ կոնֆետ ուներ Վիլյամը:

Լուծում

Պատ.՝

Դ. Վարդուհուն տատիկը և պապիկը զարդեր նվիրեցին: Տատիկը նվիրեց թենոնգներ, իսկ պապիկը՝ 4 վզնոց: Վարդուհին իր զարդերի կեսը նվիրեց Աննային, և նրա մոտ մնաց 5 զարդ: Տատիկը քանի՞ թենոնգ էր նվիրել Վարդուհուն:

Լուծում

Պատ.՝

9. Լրացնել պակասող թիվը:

4 օր 5 ժամ = ժամ

3 շաբաթ 5 օր = օր

2 տարի 6 ամիս = ամիս

4 ժամ 15 րոպե = րոպե

3 րոպե 15 վայրկյան = վայրկյան

2 ժամ 15 ր = րոպե

10. Թվերը դասավորի՛ր աճման կարգով:

5090, 5007, 5900, 9050, 9005, 9500

11. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Մայրիկը գնեց 1 կգ կոնֆետ և 2 կգ նարինջ, վճարեց ընդամենը 1800 դրամ:

Ինքա՞ն արժե մեկ կգ նարինջը, եթե 1 կգ կոնֆետը 800 դրամ է:

Լուծում

Պատ.՝

Բ. Մերին գնեց 5 էսկիմո և 2 շոկոլադ, վճարեց ընդամենը 1600 դրամ: Ինքա՞ն

արժե մեկ էսկիմոն, եթե 1 շոկոլադն արժե 300 դրամ:

Լուծում

Պատ.՝

12. Թվերը գրի՛ր տասերով:

5090

5007

5900

9050

9005

9500

13. Լուծի՛ր խնդիրները:

Ա. 6 մատիտի համար էվան վճարեց 480 դրամ, որից հետո մեկ մատիտի գինը 20 դրամով էժանացավ: Որքա՞ն արժեցավ մեկ մատիտը:

Լուծում

Պատ.՝

Բ.7 կոնֆետի համար Վիլյամը վճարեց 560 դրամ, որից հետո մեկ կոնֆետի արժեքը 10 դրամով թանկացավ: Որքա՞ն արժեցավ մեկ կոնֆետը:

Լուծում

Պատ.՝

Գ. 9 վարդի համար Դավիթը վճարեց 4500 դրամ, որից հետո մեկ վարդի արժեքը 30 դրամով էժանացավ: Այժմ որքա՞ն գումար պետք է վճարել այդ նույն վարդից 10 հատ գնելու համար:

Լուծում

Պատ.՝

Դ. 6 փուչիկի համար Ալեքը վճարեց 420 դրամ, որից հետո մեկ փուչիկի արժեքը 5 դրամով թանկացավ: Այժմ որքա՞ն գումար պետք է վճարել այդ նույն փուչիկից 8 հատ գնելու համար:

Լուծում

Պատ.՝

14. Թվերը ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով:

5090

5009

5900

9050

9005

9500

15. Հաշվի՛ր:

Թվերը մեծացրո՛ւ 10-ով, 100-ով, 1000-ով:

	+10	+100	+1000
5090			
5009			
5900			
9050			
9005			
9500			

ԴՈՒ ՇԱՏ ՈՒԺԵՂ ԵՍ



16. Թվերը փոքրացրո՛ւ 10-ով, 100-ով, 1000-ով:

	-10	-100	-1000
5090			
5009			
5900			
9050			
9005			
9500			

17. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Գնացքը մեկ ժամում 52 կմ է անցնում: 3 ժամում քանի՞ կմ կանցնի:

Լուծում

Պատ.՝

Բ. Հեծանվորդը մեկ ժամում 20 կմ է անցնում: 5 ժամում քանի՞ կմ կանցնի:

Լուծում

Պատ.՝

Գ. Մտորցիկլավարը 500 կմ ճանապարհը քանի՞ ժամում կանցնի, եթե մեկ ժամում 100 կմ է անցնում:

Լուծում

Պատ.

18. Հաշվի՛ր արտադրյալը:

$$3 \times 1 =$$

$$3 \times 10 =$$

$$3 \times 100 =$$

$$3 \times 1000 =$$

$$7 \times 10 =$$

$$9 \times 1000 =$$

$$4 \times 100 =$$

$$6 \times 10 =$$

$$8 \times 100 =$$

$$2 \times 1000 =$$

19. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Խանութը ստացավ երկու արկղ բաժակ: Առաջին արկղում կար 28 բաժակ, երկրորդ արկղում՝ 2 անգամ ավելի: Դրանից վաճառվեց 35 բաժակ: Քանի՞ բաժակ մնաց խանութում:

Լուծում

Պատ.՝

Բ. Սրճարանը ստացավ երեք տուփ թխվածքաբլիթ: Առաջին տուփում կար 60 թխվածքաբլիթ, երկրորդ տուփում՝ 2 անգամ քիչ, քան առաջին տուփում: Երրորդ տուփում կար այնքան թխվածքաբլիթ, որքան առաջին և երկրորդ տուփերում միասին: Դրանից վաճառվեց 100 թխվածքաբլիթ: Քանի՞ թխվածքաբլիթ մնաց:

Լուծում

Պատ.՝

Գ. Հողամասից առաջին օրը հավաքեցին 50 կգ կաղամբ, իսկ երկրորդ օրը՝ 3 անգամ ավելի: Հավաքած կաղամբից 70 կգ ուղարկեցին խանութ, իսկ մնացածը՝ մանկապարտեզ: Ինչքա՞ն կաղամբ ուղարկեցին մանկապարտեզ:

Լուծում

Պատ.՝

20. Հաշվի՛ր գումարը:

$$40 + 40 + 40 =$$

$$50 + 50 =$$










$$70 + 70 + 70 + 70 + 70 =$$


$$20 + 20 + 20 + 20 + 20 + 20 + 20 + 20 =$$

$$60 + 60 + 60 + 60 =$$

$$30 + 30 + 30 + 30 + 30 + 30 + 30 + 30 =$$

21. Որոշի՛ր բանջարեղենների թվային արժեքները:

			21
			27
			19

22 **24** **21** 

22. Գումարը ներկայացրո՛ւ արտադրյալի տեսքով. օրինակ՝

$$40 + 40 + 40 = 3 \times 40 = 120$$

$$50 + 50 =$$

$$70 + 70 + 70 + 70 + 70 =$$

$$20 + 20 + 20 + 20 + 20 + 20 + 20 + 20 =$$

$$60 + 60 + 60 + 60 =$$

$$30 + 30 + 30 + 30 + 30 + 30 + 30 + 30 + 30 =$$

23. Լուծի՛ր խնդիրները երկու տարբերակով:

Ա. 1 կգ գազարն արժե 300 դրամ, իսկ 1 կգ բազուկը՝ 200 դրամ: Որքա՞ն դրամ է պետք վճարել 2 կգ գազար և 3 կգ բազուկն գնելու համար:

Լուծում

I տարբերակ

II տարբերակ

Պատ.՝

ԿԵՑՑԵՄ



Բ. Որքա՞ն դրամ պետք է վճարել 5 կգ լոլիկի և 4 կգ վարունգի համար, եթե 1 կգ լոլիկն արժե 90 դրամ, իսկ 1 կգ վարունգն արժե 70 դրամ:

Լուծում

I տարբերակ

II տարբերակ

Պատ.՝

Գ. Մեկ գրիչն արժե 60 դրամ, իսկ մեկ մատիտն արժե 90 դրամ: 5-ական մատիտ և գրիչ գնելու համար որքա՞ն գումար է հարկավոր:

Լուծում

I տարբերակ

II տարբերակ

Պատ.՝

Դ. Մեծ տուփի մեջ կա 40 ձու, փոքր տուփի մեջ կա 20 ձու: Քանի՞ ձու կա 5 փոքր և 4 մեծ տուփի մեջ:

Լուծում

I տարբերակ

II տարբերակ

Պատ.՝

24. Լրացրո՛ւ այս ամսվա օրացույցը և պատասխանի՛ր հարցերին:

I օր	II օր	III օր	IV օր	V օր	VI օր	VII օր
երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի

Տարվա եղանակը	
գարուն	
ամառ	
աշուն	
Ձմեռ	

Եղանակն այսօր	
արևոտ	
անձրևոտ	
Ցրտոտ	
Քամոտ	
Մշուշոտ	
ամպամած	

Օրացույցից օգտվելով՝ պատասխանի՛ր հարցերին:

Այսօր ամսի քանի՞սն է	
Վաղը ամսի քանի՞սը կլինի:	
Երեկ ամսի քանի՞սն էր:	
Տասներկու օրից ամսի քանի՞սը կլինի:	
Ինը օր առաջ ամսի քանի՞սն էր:	

Շաբաթվա ի՞նչ օր էր	
Երեկ	
Յոթ օր առաջ	
Շաբաթվա ի՞նչ օր կլինի	
1 շաբաթ հետո	

Շաբաթվա օրը	
երկուշաբթի	
երեքշաբթի	
չորեքշաբթի	
հինգշաբթի	
ուրբաթ	
շաբաթ	
կիրակի	

25. Լրացրո՛ւ պակասող թվերը:

$$2 \text{ կգ} = \text{ գ}$$

$$7 \text{ կգ} = \text{ գ}$$

$$1 \text{ տ} = \text{ կգ}$$

$$4 \text{ տ} = \text{ կգ}$$

$$1 \text{ ց} = \text{ կգ}$$

$$5 \text{ ց} = \text{ կգ}$$

$$7000 \text{ կգ} = \text{ տ}$$

$$4000 \text{ կգ} = \text{ տ}$$

$$3000 \text{ գ} = \text{ կգ}$$

$$9000 \text{ գ} = \text{ կգ}$$

$$400 \text{ կգ} = \text{ ց}$$

$$900 \text{ կգ} = \text{ ց}$$

26. Ո՞ր կտրոն է պոկվել պատկերից:



1



2



3



4



5

27. Հաշվի՛ր արտադրյալը:

$$400 \times 20 =$$

$$60 \times 50 =$$

$$80 \times 40 =$$

$$9 \times 50 =$$

$$700 \times 5 =$$

$$200 \times 90 =$$

$$700 \times 40 =$$

$$600 \times 70 =$$

28. Լուծի՛ր խնդիրները :

Ա. Հինգ պաղպաղամ արժե 500 դրամ : Ինչքա՞ն գումար է հարկավոր 7 պաղպաղակ գնելու համար :

Լուծում

Պատ.՝

Բ. Դավիթը գնեց մեկ գնդակ և երեք գլխարկ , վճարեց ընդամենը 3700 դրամ : Ինչքա՞ն արժե մեկ գլխարկը , եթե 1 գնդակն արժե 700 դրամ:

Լուծում

Պատ.՝

29. Պատմի՛ր 5000 թվի մասին:

- Թիվը գրի՛ր տառերով:
- 5000-ն ունի _____ հազարյակ _____ հարյուրակ _____ տասնյակ և _____ միավոր
- Հարևան թվերն են՝
- Հաջորդող թիվն է՝
- Նախորդող թիվն է՝
- Մեծացրո՛ւ 50-ով:
- Մեծացրո՛ւ 500-ով:
- Մեծացրո՛ւ 5000-ով:
- Մեծացրո՛ւ 1200-ով:
- Մեծացրո՛ւ 8000-ով:
- Մեծացրո՛ւ 10. 000-ով:
- Մեծացրո՛ւ 20. 000-ով:

- Փոքրացրո՛ւ 3-ով:
- Փոքրացրո՛ւ 200-ով:
- Փոքրացրո՛ւ 2000-ով:
- Փոքրացրո՛ւ 3500-ով:
- Փոքրացրո՛ւ 1900-ով:
- Փոքրացրո՛ւ 2546-ով:
- Փոքրացրո՛ւ 3000-ով:
- Փոքրացրո՛ւ 4960-ով:

Կազմի՛ր արտահայտություններ, որոնց արժեքը հավասար է 5000-ի:



30. Հաշվի՛ր արտադրյալը:

$$7 \times 1 =$$

$$7 \times 10 =$$

$$7 \times 100 =$$

$$7 \times 1000 =$$

$$9 \times 10 =$$

$$4 \times 1000 =$$

$$2 \times 100 =$$

$$5 \times 10 =$$

$$7 \times 100 =$$

$$3 \times 1000 =$$

31. Լուծի՛ր խնդիրները :

Ա. Մայրիկը 1կգ ելակի և 5 կգ խնձորի համար վճարեց 3760 դրամ: Ի՞նչ արժե 1 կգ ելակը, եթե հայտնի է, որ մայրիկը 1կգ խնձորի համար վճարել է 500 դրամ:

Լուծում

Պատ.՝

Բ. Գրիգորը, վճարելով 2180 դրամ, գնել է 1 տետր և 5 տուփ մատիտ: Ի՞նչ արժե 1 տետրը, եթե հայտնի է, որ 1 տուփ մատիտն արժե 400 դրամ:

Լուծում

Պատ.

32. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$30 \times 40 =$$

$$20 \times 70 =$$

$$300 \times 8 =$$

$$40 \times 90 =$$

$$8 \times 700 =$$

$$900 \times 5 =$$

$$70 \times 30 =$$

$$30 \times 30 =$$

$$80 \times 50 =$$

$$20 \times 30 =$$

$$50 \times 50 =$$

$$90 \times 10 =$$

$$800 \times 50 =$$

33. Լրացրո՛ւ պակասող թվերը:

$$6 \text{ կգ} = \quad \text{գ}$$

$$2 \text{ կգ} = \quad \text{գ}$$

$$5 \text{ տ} = \quad \text{կգ}$$

$$3 \text{ տ} = \quad \text{կգ}$$

$$2 \text{ ց} = \quad \text{կգ}$$

$$4 \text{ ց} = \quad \text{կգ}$$

$$2000 \text{ կգ} = \quad \text{տ}$$

$$8000 \text{ կգ} = \quad \text{տ}$$

$$1000 \text{ գ} = \quad \text{կգ}$$

$$8000 \text{ գ} = \quad \text{կգ}$$

$$300 \text{ կգ} = \quad \text{ց}$$

$$800 \text{ կգ} = \quad \text{ց}$$

34. Լուծի՛ր խնդիրները :

Ա. Մայրիկը 5 կգ խնձորին 500 դրամ էր վճարել: 700 դրամով ինչքա՞ն խնձոր կարելի է գնել:

Լուծում

Պատ.՝

Բ. 2 արժույթը 2000 դրամ արժե: 8000 դրամով քանի՞ արժույթ կարելի է գնել:

Լուծում

Պատ.՝

Գ. 3 ավտոբուսով և 6 մարդատար մեքենայով զբոսաշրջիկներ Մատենադարան եկան: Ամեն ավտոբուսի մեջ 25 մարդ էր նստել, իսկ ամեն մեքենայի մեջ՝ 5 մարդ: Քանի՞ մարդ էր Մատենադարան էքսկուրսիա եկել:

Լուծում

Պատ.՝

35. Թվերը գրի՛ր տասերով:

4541

12.600 -

37.610 -

55.348 -

78.417 -

35.601 –

315.605 –

721.400 –

631.924 –

935.001 –

800.900 –

800.090 –

36. Թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստացվի հնարավոր ամենամեծ թիվը:

48.951

67.924

70.971

50.800

Ժամ



37. Լուծի՛ր խնդիրները:

	1 հատը	2 h	5 h	9 h
մատիտ	70 դր.			
Վրձին	300			
Սրիչ	200			
Ջրաներկ	400			
Նոթատետր	2000			
Բառարան	5000			

Որքա՞ն գումար է հարկավոր

Ա. Երեք մատիտ, չորս սրիչ, մեկ նոթատետր գնելու համար:

Լուծում

Պատ.՝

Բ. Վեց սրիչ, յոթ ջրաներկ, երեք բառարան գրելու համար:

Լուծում

Պատ.՝

38.Թվերը գրի՛ր տասերով:

6500

7450

9998

10. 000

15.200

21.610

78.004

34.098

321.800

425.80

801.607

39. Լուծի՛ր խնդիրները:

Փորձիր լուծել նկարելով:


Ա. Բազմահարկ շենքի յուրաքանչյուր հարկում երեք բնակարան կա: Ո՞րերորդ հարկում է 27-րդ բնակարանը:

Պատ.՝



Բ. Յոթ եղբայրներից յուրաքանչյուրն ունի մեկ քույր: Քանի՞ երեխա կա այդ ընտանիքում:

Պատ.՝



40. Թվերը ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով:

$3567 =$

$5486 =$

$9000 =$

$10.000 =$

$15.200 =$

$21.610 =$

$78.004 =$

$321.800 =$

$425.080 =$

$801.09 =$

41. Հաշվի՛ր արտահայտության արժեքը :

$4 \times 1 =$


$4 \times 10 =$

$4 \times 100 =$

$4 \times 1000 =$

$4 \times 10.000 =$

$7 \times 100.000 =$



$14 \times 100 =$

$140 \times 100 =$

$32 \times 1000 =$

$220 \times 10 =$

$25 \times 30 =$

$25 \times 300 =$

$250 \times 300 =$

42. Լուծի՛ր խնդիրները :

Ա. Արամը գնեց 4 մատիտ և 2 սրիչ : Վճարեց ընդամենը 1000 դրամ : Ինչքա՞ն արժե 1 մատիտը եթե 1 սրիչը 300 դրամ է:

Լուծում

Պատ.՝

Բ. Նարեն 4 կարկանդակի և 2 փքաբլիթի համար վճարեց 800 դրամ : Ինչքա՞ն արժե 1 կարկանդակը, եթե 1 փքաբլիթը արժե 200 դրամ :

Լուծում

Պատ.՝

43. Լրացրո՛ւ աղյուսակի դատարկ վանդակները :

Նախորդող թիվը	Թիվը	Հաջորդող թիվը
	7000	
	8000	
	3270	
	1800	
	12.000	
	837.800	
	204.100	
	500.000	

44. Թվերը գրի՛ր թվանշաններով:

Չորս հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր վաթսուներեք

երկու հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր քսանհինգ

վեց հազար յոթ հարյուր քսանմեկ

քսանվեց հազար ութ հարյուր տասնմեկ

հինգ հազար հինգ հարյուր

տասը հազար վեց հարյուր ութսունութ

երկու հազար երկու

չորս հազար տասնվեց

45. Թվերը ներկայացրո՛ւ կարգային գումարելիների տեսքով.

$$128\ 223 = 100\ 000 + 20\ 000 + 8\ 000 + 200 + 20 + 3$$

659 300

456 709

408 963

104 236

477 496

147 658

233 659

100 306

106 002

46. Լրացրու՝:

Ա. Գրի՛ր այն վեցանիշ թիվը, որի միավորը 3 է, հարյուր հազարավորը՝ 7, իսկ մյուս թվանշանները՝ 0:

--	--	--	--	--	--	--

Բ. Գրի՛ր այն վեցանիշ թիվը, որի տասնավորը 2 է, հազարավորը՝ 1, իսկ մյուս թվանշանները՝ 7:

--	--	--	--	--	--	--

Գ. Գրի՛ր այն վեցանիշ թիվը, որի տասնավորը 9 է, հարյուրավորը 5 է հազարավորը՝ 1, իսկ մյուս թվանշանները՝ 0:

--	--	--	--	--	--	--

47. Պատմի՛ր 10 000 թվի մասին:

1. Թիվը գրի՛ր տառերով.

2. Ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով

3. Հարևան թվերն են

12. Թվի թվանշաններով կազմի՛ր 5 վեցանիշ թիվ.

13. Կազմածդ թվերը դասավորի՛ր աճման կարգով.

14. Կազմածդ թվերը դասավորի՛ր նվազման կարգով.

48. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Հեծանվորդն I օրն անցավ 115 կմ ճանապարհ, իսկ II օրը՝ 15 կմ-ով ավելի, քան I օրը: III օրը ինչքա՞ն ճանապարհ անցավ հեծանվորդը, եթե հայտնի է, որ երեք օրում միասին անցավ 400 կմ:

Լուծում

Պատ.՝

Բ. Հայկը տնից դուրս եկավ ժամը 11:35 և 45 րոպեից հասավ դպրոց: Ժամը քանիսի՞ն Հայկը դպրոց հասավ:

Լուծում

Պատ.՝

49. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$400 \times 20 - 30 \times 200 =$$

$$500 \times 40 - 20 \times 900 =$$

$$300 \times 200 + 40 \times 50 =$$


$$900 \times 40 - 60 \times 600 =$$

50. Լուծի՛ր խնդիրները:

Փորձի՛ր լուծել նկարելով.

Ա. Ծառատունկին մի շարքի վրա տնկեցին 20 թուփ: Նիկան տնկեց վերջից հաշված 10-րդ թուփը: Սկզբից հաշված՝ ո՞րերորդ թուփը տնկեց Նիկան:

Պատ.՝



Բ. Վիլյամը սկսեց հաշվել 4-ից երեքներով՝ 4, 7, 10, ... 31: Քանի՞ թիվ արտասանեց Վիլյամը:


Պատ.՝

51. Գտի՛ր անհայտ թիվը:

$2 \times \text{bee} + \text{fly} = 11$

$3 \times \text{bee} - \text{fly} = 9$

$2 \times \text{fly} - \text{bee} = ?$



8. Մեծացրո՛ւ 100 անգամ.

9. Փոքրացրո՛ւ 10 անգամ.


10. Թվի թվանշաններով կազմի՛ր հնարավոր ամենափոքր վեցանիշ թիվը.

11. Թվի թվանշաններով կազմի՛ր հնարավոր ամենամեծ վեցանիշ թիվը.

12. Թվի թվանշաններով կազմի՛ր 5 վեցանիշ թիվ.

13. Կազմածդ թվերը դասավորի՛ր աճման կարգով.

53. Գտի՛ր պակասող թիվը:



54. Լուծի՛ր խնդիրը:

Որքա՞ն դրամ պետք է վերադարձնի վաճառողը Հայկին, եթե նա գնել է 3 կգ խնձոր, 3 կգ դեղձ, 2 կգ տանձ, 4 կգ սալոր և վաճառողին տվել մեկ հատ 10 000 դրամանոց թղթադրամ:

Անվանումը	1 կգ-ի արժեքը	
Խնձոր	5 x 50	
Դեղձ	4x100+3 x 20	
Տանձ	70 x 4	
Սալոր	5 x 60 + 4 x 10	

Լուծում

Պատ.

55. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$5 \times 10 + 2 \times 17 =$$

$$25 \times (10 + 2 \times 5) =$$














$$(25 - 5) \times 30 =$$

$$45 \times (16 - 2 \times 3) =$$

$$5 \times (80 + 4 \times 5) =$$

$$80 : 8 \times (4 \times 9) =$$

56. Ո՞ր պատկերը պետք է լինի դատարկ վանդակներում:

4				
3				
2				
1				
	Ա	Բ	Գ	Դ

57. Հաշվի՛ր գումարը:

$$15479 + 497802 =$$

$154978 + 95412 =$

$450897 + 548977 =$

$247009 + 489726 =$

58. Պատմի՛ր 25.500 թվի մասին:

- Թիվը գրի՛ր տասերով:
- 25500-ն ունի ___ տասնյակ և ___ միավոր

- Հարևան թվերն են՝
- Հաջորդող թիվն է՝
- Նախորդող թիվն է՝
- Մեծացրո՛ւ 24 789-ով:
- Մեծացրո՛ւ 201 970-ով:
- Մեծացրո՛ւ 90 784-ով:
- Մեծացրո՛ւ 101 472-ով:
- Մեծացրո՛ւ 800 064-ով:
- Մեծացրո՛ւ 300 747-ով:
- Փոքրացրո՛ւ 3036-ով:
- Փոքրացրո՛ւ 20 101 - ով:
- Փոքրացրո՛ւ 20 002-ով:

- Փոքրացրո՛ւ 19 471-ով:
- Փոքրացրո՛ւ 3048-ով:
- Մեծացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ:
- Փոքրացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ
- Կլորացրո՛ւ մինչև մոտակա տասնյակը, հայուրյակը, հազարյակը
- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենափոքր թիվը:
- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենամեծ թիվը

59. Լրացրո՛ւ աղյուսակի դատարկ վանդակները:

նախորդող թիվը	Թիվը	հաջորդող թիվը
	14154	
	320295	
	502094	
	940100	
	140000	
	850091	

60. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$600 \times 40 =$$

$$800 \times 300 =$$

$$9 \times 7000 =$$

$$3000 \times 40 =$$

$$600 \times 60 =$$

$$2500 : 50 =$$

$$63000 : 900 =$$

$$32000 : 8 =$$

$$480000 : 6000 =$$

$$270000 : 3000 =$$

61. Հաշվի՛ր տարբերությունը:

$$401547 - 90809 =$$

$$400978 - 54129 =$$

$$800971 - 297079 =$$

$$470092 - 297026 =$$

ՏԵՍԱՐ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՄ



62. Լուծի՛ր խնդիրները:

Ա.9 փուչիկի համար Աննան վճարեց 720 դրամ, որից հետո մեկ փուչիկի գինը 20 դրամով էժանացավ: Որքա՞ն արժեցավ մեկ գրիչը:

Լուծում

Պատ.՝

Բ.9 կ պաղպաղակի համար Վիլյամը վճարեց 810 դրամ, որից հետո մեկ պաղպաղակի արժեքը 10 դրամով թանկացավ: Որքա՞ն արժեցավ մեկ պաղպաղակը:

Լուծում

Պատ.՝

Գ. 7 վարդի համար Դավիթը վճարեց 3500 դրամ, որից հետո մեկ վարդի արժեքը 30 դրամով էժանացավ: Այժմ որքա՞ն գումար պետք է վճարել այդ նույն վարդից 10 հատ գնելու համար:

Լուծում

Պատ.՝

Դ. 8 փուլիկի համար Ալեքը վճարեց 480 դրամ, որից հետո մեկ փուլիկի արժեքը 5 դրամով թանկացավ: Այժմ որքա՞ն գումար պետք է վճարել այդ նույն փուլիկից 12 հատ գնելու համար:

Լուծում

Պատ.՝

63. Լրացրո՛ւ աղյուսակի դատարկ վանդակները:


միրգ	100 գրամի արժեքը	200 գրամ	500 գրամ	1 կգ
Ելակ	80 դրամ			
Նարինջ	60 դրամ			
Դեղձ	40 դրամ			
Խնձոր	35 դրամ			

64. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$640 : (48 : 6) + 70 : (700 : 70) =$$

$$360 : (42 : 7) - 80 : 80 \times 60 =$$

$$360 \times (42 - 7 \times 6) + 87 : 1 =$$



65. Համեմատի՛ր և դի՛ր համապատասխան նշանը:

$$4500 : 50 \quad 4500 : 5$$

$$6300 : 9 \quad 63000 : 900$$

$$3200 : 80 \quad 3200 : 8$$

$$72000 : 9000 \quad 72000 : 900$$

$$210000 : 3000 \quad 210000 : 300$$

$$10000 : 5000 \quad 10000 : 500$$

66. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Գաթա պատրաստելու համար տատիկը գնել է 4 տուփ կարագ: Հաշվի՛ր, թե քանի կիլոգրամ կարագ է գնել նա՝ գիտենալով, որ 1 տուփ կարագի զանգվածը 500 գրամ է:

Լուծում

Պատ.՝

Բ. Շոկոլադ պատրաստելու համար մայրիկը գնել է 6 տուփ կակաո: Հաշվի՛ր, թե քանի կիլոգրամ կակաո է գնել նա՝ գիտենալով, որ 1 տուփ կակաոյի զանգվածը 500 գրամ է:

Լուծում

Պատ.՝

Գ. 500 գրամ շաքարավազը 200 դրամ է: Որքա՞ն գումար է հարկավոր

1 կգ շաքարավազ գնելու համար

Լուծում

Պատ.՝

3 կգ շաքարավազ գնելու համար

Լուծում

Պատ.՝

67. Գտի՛ր ա նվազելին և կատարի՛ր ստուգում:

Հիշի՛ր. Նվազելին կստանաս, եթե հանելին գումարես տարբերությանը:

$$\underline{\hspace{2cm}} - 34007 = 34900$$

_____ - 240709 = 12008

_____ - 67000 = 21000

_____ - 30047 = 12840

68. . Լրացրո՛ւ աղյուսակները:

A	400	600	700
B	50	60	100
$a \times b + a : b$			

A	2000	800	5000
B	4	400	50
$a \times b - a : b$			

69. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Դպրոցի լողավազանի ջուրը լցնում են երկու խողովակով: Առաջին խողովակով լցրին 4500 լ ջուր, երկրորդով՝ 3 անգամ ավելի: Ընդամենը որքա՞ն ջուր լցվեց լողավազանի մեջ:

Լուծում

Պատ.՝

Բ. Դատարկ ջրավազանի մեջ առաջին խողովակով լցվեց 1820 լ ջուր, իսկ երկրորդով՝ 140 լ-ով ավելի: Տնկիները ջրելու համար պապիկը այդ ջրից օգտագործեց 1570 լ ջուր: Որքա՞ն ջուր մնաց ջրավազանում:

Լուծում

Պատ.՝

70. Պատմի՛ր 42000 թվի մասին:

- Թիվը գրի՛ր տասերով:
- 42000-ն ունի __ տասնյակ և __ միավոր
- Հարևան թվերն են՝
- Հաջորդող թիվն է՝

- Նախորդող թիվն է՝
- Մեծացրո՛ւ 40789-ով:
- Մեծացրո՛ւ 21970-ով:
- Մեծացրո՛ւ 97084-ով:
- Մեծացրո՛ւ 101470-ով:
- Մեծացրո՛ւ 500064-ով:
- Մեծացրո՛ւ 100747-ով:
- Փոքրացրո՛ւ 30036-ով:
- Փոքրացրո՛ւ 20101 - ով:
- Փոքրացրո՛ւ 20009-ով:
- Փոքրացրո՛ւ 10940-ով:
- Փոքրացրո՛ւ 13048-ով:

- Մեծացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ
- Փոքրացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ
- Կլորացրո՛ւ մինչև մոտակա տասնյակը, հարյուրյակը, հազարյակը
- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենափոքր թիվը:
- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենամեծ թիվը:


71. Գտի՛ր հանելիճն և կատարի՛ր ստուգում:

Հիշի՛ր. Հանելիճն կստանաս, եթե նվազելիից հանես տարբերությունը:

$$40002 - \underline{\hspace{2cm}} = 3608$$

$$62001 - \underline{\hspace{2cm}} = 4700$$

$$64900 - \underline{\hspace{2cm}} = 20087$$



$$200000 - \underline{\hspace{2cm}} = 16500$$

72. Լուծի՛ր խնդիրները:

Ա. 1 կգ մրգային աղցան պատրաստելու համար օգտագործվել է 250 գ խնձոր, 430 գ նարինջ և ելակ: Որքա՞ն էլակ է օգտագործվել:

Լուծում

Պատ.՝

Բ. 1 կգ աղցանը պարունակում է 460 գ կաղամբ, 280 գ գազար, 180 գ կանաչի և եգիպտացորեն: Որքա՞ն եգիպտացորեն է օգտագործվել:

Լուծում

Պատ.՝

Գ. Մայրիկը 6 տուփ կաթնաշոռի և 1 տուփ կարագի համար վճարեց 1530 դրամ: Ի՞նչ արժե 1 տուփ կարագը, եթե 1 տուփ կաթնաշոռն արժե 200 դրամ:

Լուծում

Պատ.՝

73. Լրացրո՛ւ աղյուսակը:

Գումարելի	25410	14020	34510		45912		14570	64100
Գումարելի		24111		21877		35614		
Գումար	30000		45000	45000	50000	42004	23000	72300

74. Ի՞նչ թիվ պետք է լինի հարցական նշանի փոխարեն:

$$2 \times \text{blue flower} + \text{red flower} = 11$$

$$3 \times \text{blue flower} - \text{red flower} = 9$$

$$2 \times \text{red flower} - \text{blue flower} = ?$$

75. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$6545 + 3218 - 3 \times 700 =$$

$$235 \times 3 - 4200 : 60 =$$

$$8100 : 90 + (35 \times 6) : 7 =$$

$$3500 : 70 + (240 \times 10) : 8 =$$

76. Կազմի՛ր արտահայտություններ.

Ա. 3 հատ 5 -ով ստացի՛ր ա. 2, բ. 5, գ. 0, դ. 4:

Բ. 5 հատ 3-ով ստացի՛ր ա. 4, բ. 13, գ. 3, դ. 31:

Գ. 4 հատ 4-ով ստացի՛ր ա. 3, բ. 1, գ. 10, գ. 6:

77. Պատմի՛ր 84300 թվի մասին:

- Թիվը գրի՛ր տառերով:
- 84300-ն ունի ___ տասնյակ և ___ միավոր
- Հարևան թվերն են՝
- Հաջորդող թիվն է՝
- Նախորդող թիվն է՝
- Մեծացրո՛ւ 41789-ով:
- Մեծացրո՛ւ 13970-ով:
- Մեծացրո՛ւ 72084-ով:
- Մեծացրո՛ւ 201470-ով:
- Մեծացրո՛ւ 440064-ով:
- Մեծացրո՛ւ 240747-ով:

- Փոքրացրո՛ւ 30036-ով:
- Փոքրացրո՛ւ 20101 - ով:
- Փոքրացրո՛ւ 39009-ով:
- Փոքրացրո՛ւ 20940-ով:
- Փոքրացրո՛ւ 11048-ով:
- Մեծացրո՛ւ 10 անգամ, 100 աննգամ:
- Փոքրացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ
- Կլորացրո՛ւ մինչև մոտակա տասնյակը, հարյուրյակը, հազարյակը
- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենափոքր թիվը:

78. Երկու թվերի գումարը 54260 է: Այդ թվերից մեկը 19870 է: Գտի՛ր այդ թվերի տարբերությունը:

Լուծում

Պատ.՝

Երկու թվերի տարբերությունը 36540 է: Այդ թվերից մեկը 17520 է: Գտի՛ր այդ թվերի գումարը:

Լուծում

Պատ.՝

79. Նկարում բերված տվյալներից որոշի՛ր յուրաքանչյուր ծաղկի արժեքը:



1200 դրամ



1200 դրամ



900 դրամ

ԳՐԿՈՒՄ ԵՄ ՔԵԶ



80. Լրացրո՛ւ աղյուսակները:

A	800	900	600
B	50	30	300
$a \times b + a : b$			

A	4000	1200	9000
B	4	300	30
$a \times b - a : b$			

81. Լրացրո՛ւ աղյուսակի դատարկ վանդակները:

	1 կգ	500 կգ	2 կգ 500 գ	10 կգ	250 գ
Ելակ	1400 դրամ				
Կոնֆետ	2200 դրամ				
Պաղպաղակ	2000 դրամ				
Հավիա	800 դրամ				

Պատկերացրո՛ւ, որ ունես 2500 դրամ: Կկարողանա՞ս քո ունեցած գումարով գնել

Ա. 1 կգ ելակ և կես կգ կոնֆետ

Բ. 2 կգ հավիա և կես կգ պաղպաղակ

Գ. 1 կգ կոնֆետ և կես կգ պաղպաղակ

Դ. Կես կգ կոնֆետ, կես կգ պաղպաղակ և 1 կգ ելակ

82. Լրացրո՛ւ պակասող թվերը:

$$4 \text{ շաբաթ} - 2 \text{ շաբաթ} = 2 \text{ օր} =$$

$$2 \text{ տարի} - 1 \text{ տարի} = 8 \text{ ամիս} =$$

$$6 \text{ օր} - 2 \text{ օր} = 14 \text{ ժամ} =$$

$$9 \text{ ժամ} - 2 \text{ ժամ} = 40 \text{ ր} =$$

$$4 \text{ ր} - 2 \text{ ր} = 30 \text{ վայրկյան} =$$

$$3 \text{ տ} - 1 \text{ տ} = 300 \text{ կգ} =$$


$$2 \text{ ց} - 1 \text{ ց} = 20 \text{ կգ} =$$

$$6 \text{ կգ} - 3 \text{ կգ} = 400 \text{ գ} =$$

$$5 \text{ կմ} - 3 \text{ կմ} = 400 \text{ մ} =$$

$$7 \text{ մ} - 2 \text{ մ} = 30 \text{ սմ} =$$

$$4 \text{ սմ} - 2 \text{ սմ} = 3 \text{ մմ} =$$



83. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Արկղում կար 7 կգ խնձոր: 3 կգ 200 գ խնձորը կերան: Ինքա՞ն խնձոր մնաց:

Լուծում

Պատ.՝

Բ. Ալրադացում կար 3 տ ալյուր: 1 տ 600 կգ ալյուրը ուղարկեցին խանութ: Ինչքա՞ն ալյուր մնաց:

Լուծում

Պատ.՝

Գ. Թելի կծիկում կար 45 մ թել: 30 մ 20 սմ-ով գլխարկ գործեցին: Ինչքա՞ն թել մնաց:

Լուծում

Պատ.՝

Դ. Պետրոսը 2 կմ ճանապարհից 1 կմ 600 մ-ը անցավ հեծանիվով, մնացած ճանապարհը՝ ոտքով: Ինքա՞ն ճանապարհ Պետրոսը ոտքով անցավ:

Լուծում

Պատ.՝

84. Պատմի՛ր 42000 թվի մասին:

- Թիվը գրի՛ր տառերով:
- 42000-ն ունի ___ տասնյակ և ___ միավոր
- Հարևան թվերն են՝
- Հաջորդող թիվն է՝
- Նախորդող թիվն է՝
- Մեծացրո՛ւ 40789-ով:

- Մեծացրո՛ւ 21970-ով

- Մեծացրո՛ւ 97084-ով:

- Մեծացրո՛ւ 101470-ով:

- Մեծացրո՛ւ 500064-ով:

- Մեծացրո՛ւ 100747-ով:

- Փոքրացրո՛ւ 30036-ով:

- Փոքրացրո՛ւ 20101 - ով:

- Փոքրացրո՛ւ 20009-ով:

- Փոքրացրո՛ւ 10940-ով:

- Փոքրացրո՛ւ 13048-ով:

- Մեծացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ:

- Փոքրացրո՛ւ 10 անգամ, 100 անգամ

- Կլորացրո՛ւ մինչև մոտակա տասնյակը, հարյուրյակը, հազարյակը

- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենափոքր թիվը:

- Թվի թվանշանները վերադասավորի՛ր այնպես, որ ստանաս հնարավոր ամենամեծ թիվը:

85. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$1200 : 300 =$$

$$2500 : 50 =$$

$$6300 : 90 =$$

$$42000 : 700 =$$

$$56000 : 80 =$$

$$3600 : 90 =$$

$$256 \times 7 = 200 \times 7 + 50 \times 7 + 6 \times 7$$

$$3694 \times 3 =$$

$$1420 \times 5 =$$

$$3450 \times 4 =$$

$$2145 \times 6 =$$

$$3748 \times 2 =$$

86. Կռահի՛ր թիվը:

Ա. Զույգ կլոր եռանիշ թիվ է, հարյուրավորը 9 է, տասնավորը 3 է:

Պատ.՝

Բ. Պարունակում է 3 հարյուրյակ. 8 տասնյակ, զույգ է, փոքր է 122-ից:

Պատ.՝

Գ. Ամենամեծ քառանիշ կենտ թիվն է:

Պատ.՝


Դ. Ամենափոքր վեցանիշ կենտ թիվն է:

Պատ.՝

Ե. Ամենափոքր հնգանիշ կենտ թիվն է:

Պատ.՝

87. Ո՞ր կտորն է պակասում:



88. Կազմի՞ր արտահայտություններ և հաշվի՞ր գումարը:

Թղթադրամ	քանակը	քանակը	քանակը
	2 հատ	4 հատ	9 հատ
	4 հատ	9 հատ	3 հատ
	3 հատ	4 հատ	10 հատ
	2 հատ	3 հատ	4 հատ
	5 հատ	7 հատ	3 հատ
	1 հատ	2 հատ	1 հատ
Ընդամենը			

89. Լուծի՛ր խնդիրները:

Ա. 5 կգ կարտոֆիլի և 1 կգ սոխ գնելու համար հարկավոր է 1300 դրամ: Ինչքա՞ն արժե 1 կգ կարտոֆիլը, եթե 1 կգ սոխն արժե 300 դրամ:

Լուծում

Պատ.՝

Որքա՞ն գումար է հարկավոր 10-ական կիլոգրամ կարտոֆիլ և սոխ գնելու համար:

Լուծում

Պատ.՝

Բ. 3 կգ կաղամբի և 1 կգ գազարի համար վճարեցին 740 դրամ: Ինչքա՞ն արժե 1 կգ կաղամբը, եթե 1 կգ գազարն արժե 140 դրամ:

Լուծում

Պատ.՝

Որքա՞ն գումար է հարկավոր 20-ական կիլոգրամ կաղամբ և գազար գնելու համար:

Լուծում

Պատ.՝

90. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$456 \times 400 =$$

$$987 \times 30 =$$

$$48 \times 6000 =$$

$$348 \times 60 =$$



$678 \times 700 =$

$640 \times 7 =$

$67800 \times 5 =$

$78300 \times 6 =$


ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ



$69000 \times 4 =$

$94600 \times 9 =$

91. Որոշի՛ր յուրաքանչյուր բանջարեղենի արժեքը և նշի՛ր՝ համապատասխան բանջարեղենը պատկերելով:



750 դրամ



400 դրամ



550 դրամ

92. Լուծի՛ր խնդիրները:

Գ. Երբ Նարեն իր գումարի կեսը տվեց Աննային, իր մոտ մնաց 400 դրամ: Ինչքա՞ն գումար ուներ Նարեն:

Լուծում

Պատ.՝

Դ. Երբ Դավիթը կարդաց գրքի էջերի կեսը, մնաց կարդալու 80 էջ: Քանի՞ էջից էր կազմված գիրքը:

Լուծում

Պատ.՝

93. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$4500 : 10 + (5000 : 100 + 5) \times 10 =$$

$$6300 : 63 : (400 : 8 \times 2) =$$

$$32 \times (5 \times 2) + (30 \times 20 + 800 : 10) =$$

$$5000 : (25 \times 4 \times 10) =$$

$$500 \times (250 : 10 : 5) \times 10 =$$

94. Ի՞նչ թիվ էմ ես:

Երկնիշ էմ, կենտ էմ, 5-ին պատիկ էմ, թվանշաններիս գումարը 7 է:

Պատ.՝

Երկնիշ էմ, կլոր էմ, 3-ին պատիկ էմ:

Պատ.՝

Եռանիշ էմ, կենտ էմ, հարյուրավորս 2 է, տասնավորս 8, թվանշաններիս գումարը՝ 13:

Պատ.՝

Եռանիշ էմ, կլոր էմ, բաժանվում էմ 100-ի, հարյուրավորս 7 է:

Պատ.՝

95. Հաշվի՛ր արտադրյալը:

$$2300 \times 6 =$$

$$1400 \times 9 =$$

$$780 \times 5 =$$

$$39000 \times 3 =$$

$$12000 \times 8 =$$

$$40 \times 40 =$$

$$300 \times 20 =$$


$$200 \times 70 =$$

$$80 \times 600 =$$

$$90 \times 8000 =$$

$$70 \times 700 =$$

96. Աղյուսակից օգտվելով՝ լրացրո՛ւ աղյուսակը:



բանջարեղեն	1 կգ արժեքը	2 կգ արժեքը	5 կգ արժեքը	10 կգ արժեքը	30 կգ արժեքը	90 կգ արժեքը
կարտոֆիլ						
կաղամբ						
սմբուկ						
դդում						
ճակնդեղ						
բրոկոլի						

բանջարեղեն	Վճարեցին	Գնեցին ... կգ
կարտոֆիլ	6000 դրամ	
կաղամբ	2400 դրամ	
սմբուկ	3600 դրամ	
դդում	1200 դրամ	
ճակնդեղ	6000 դրամ	
բրոկոլի	3500 դրամ	

97. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Կարմիր ավտոմեքենան սլանում էր կապույտի ետևից: Հետո նրանք հավասարվեցին: Ինչո՞ւ:



Պատ.՝

Ա. Կարմիր մեքենան ավելի արագ էր սլանում:

Բ. Կապույտ մեքենան ավելի արագ էր սլանում:

Գ. Մեքենաների արագությունները հավասար են:

Բ. Ռազմիկը քույրիկի համար նվեր պատրաստեց: Այն գտնվում է կարմիր, կլոր հատակով, ժապավենով և բարձր տուփում: Ո՞ր տուփում է նվերը:



N1

N2

N3

N4

Պատ.՝

98. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$30 \times 10 =$$

$$70 \times 4 =$$

$$50 \times 90 =$$

$$20 \times 600 =$$

$$6000 \times 30 =$$

$$500 : 100 =$$

$$9000 : 10 =$$

$$350 : 7 =$$

$$6300 : 900 =$$

$$56000 : 80 =$$

99. Կռահի՛ր թիվը:

Ա. Զույգ երկնիշ թիվ է, տասնավորը 3 է, և բազմապատիկ է 4-ին:

Պատ.՝

Բ. Պարունակում է 12 տասնյակ, կենտ է, փոքր է 122-ից:

Պատ.՝

Գ. Ամենամեծ զույգ քառանիշ թիվն է:

Պատ.՝

Դ. Ամենափոքր կենտ եռանիշ թիվն է:

Պատ.՝

100. Դի՛ր փակագծեր այնպես, որ ստանաս հավասարություն:

$$80 - 60 - 40 : 0 = 79$$

$$80 - 60 - 40 : 20 = 22$$

$$80 : 40 - 20 + 20 = 24$$

$$80 : 40 - 20 + 20 = 2$$

101. Պատմի՛ր 206 400 թվի մասին:

1. Թիվը գրի՛ր տառերով.

2. Ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով

3. Հարևան թվերն են

4. Հաջորդող թիվն է

5. Նախորդող թիվն է

6. Մեծացրո՛ւ 112.014-ով, 78013-ով.

7. Փոքրացրո՛ւ 104938-ով, 23472-ով.

8. Մեծացրո՛ւ 10 անգամ.

9. Փոքրացրո՛ւ 100 անգամ.

10. Թվի թվանշաններով կազմի՛ր հնարավոր ամենափոքր վեցանիշ թիվը.

11. Թվի թվանշաններով կազմի՛ր հնարավոր ամենամեծ վեցանիշ թիվը.

12. Կազմածոթ թվերը դասավորի՛ր աճման կարգով.

102. Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

$$4800 : 600 \times (20 + 4 \times 20) : 400 =$$

$$6400 : 80 + (70 \times 30 - 50 \times 4) =$$

$$50 \times 800 - 1000 : (25 \times 40) =$$

$$8000 : (160 : 2) + 700 \times 70 =$$

103. Լուծի՛ր խնդիրները:

Ա. Եվան հեքիաթների գիրքը սկսեց կարդալ ապրիլի 3-ին և այն վերջացրեց մայիսի 2-ին: Քանի՞ էջանոց էր այդ գիրքը, եթե Եվան կարդում էր ամեն օր, օրական 4 էջ:

Լուծում

Պատ.՝

Բ. Ռազմիկը խնդրագրքի խնդիրները սկսեց լուծել մարտի 27-ից և ավարտեց ապրիլի 10-ին: Քանի՞ խնդիր լուծեց Ռազմիկը, եթե նա օրական լուծում էր 10 խնդիր:

Լուծում

Պատ.՝

104. Տրված թվերը գրի՛ր տասերով:

15495

35410

64600

97801

654187

485950

475100

650547


478001

524662

999 999

1 000 000

105. Աղյուսակից օգտվելով՝ լրացրո՛ւ աղյուսակը:



առարկա	1 հատի արժեքը	2 հատի արժեքը	5 հատի արժեքը	10 հատի արժեքը	30 հատի արժեքը	90 հատի արժեքը
Մկրատ						
Կրտիչ						
Քանոն						
Ամրակ						
Մատիտ						
Կոճղամ						

Առարկա	վճարեց	Գնեց ... հատ
Մկրատ	9000 դրամ	
Կրտիչ	1800 դրամ	
Քանոն	1500 դրամ	
Ամրակ	400 դրամ	
Մատիտ	32000 դրամ	
Կոճգամ	800 դրամ	

106. Պատմի՛ր 674 820 թվի մասին:

1. Թիվը գրի՛ր տասերով.

2. Ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով

3. Հարևան թվերն են

4. Հաջորդող թիվն է

5. Նախորդող թիվն է

6. Մեծացրո՛ւ 258.145-ով, 80813-ով.

7. Փոքրացրո՛ւ 40937-ով, 203451-ով.

8. Մեծացրո՛ւ 100 անգամ.

9. Փոքրացրո՛ւ 10 անգամ.

10. Թվի թվանշաններով կազմի՛ր հնարավոր ամենափոքր վեցանիշ թիվը.

11. Թվի թվանշաններով կազմի՛ր հնարավոր ամենամեծ վեցանիշ թիվը.

12. Թվի թվանշաններով կազմի՛ր 5 հատ վեցանիշ թիվ.

13. Կազմածդ թվերը դասավորի՛ր նվազման կարգով.

107. ԺՊՏԱ))))

108. Տրված թվերը դասավորի՛ր նվազման կարգով:

15495

35410

64600

97801

654187

485950

475100

650547

478001

109. Ո՞ր թիվն է:

Երկնիշ էմ, կլոր էմ, 8-ի պատիկ էմ, թվանշաններիս գումարը 4 է:

Պատ՝

Երկնիշ էմ, կենտ էմ, 9-ի պատիկ էմ, թվանշաններիս գումարը 9 է:

Պատ՝.

Եռանիշ էմ, կլոր էմ, բաժանվում էմ 100-ի, թվանշաններիս գումարը 5 է:

Պատ՝.

Եռանիշ էմ, կենտ էմ, թվանշաններս նույնն էս, թվանշաններիս գումարը բաժանվում է 9-ի:

Պատ.՝

Քառանիշ էմ, հազարավորս 5 է, հարյուրավորս 3 է, բաժանվում էմ 100-ի:

Պատ.՝

110. Տրված թվերը գրի՛ր տասերով:

20451

35740

30045

64009

300474

395007

740009

600780

